Հալիձորի բերդը

ՄՈՒՐԱՏ Մ. ՀԱՍՐԱԹԵԱՆ

Պատմական Հայաստանի կարեւորագոյն նահանգներից մէկը՝ Սիւնիքը, հնուց ի վեր յայտնի է անառիկ ամրոցներով եւ պաշտպանական կառուցուածքների ամրողջ սիստեմներով։ Բայց եթէ վաղ շրջանի բերդերն ու ամրոցները՝ Բաղաբերդը, Երնջակը, Որոտնը, Սմբատաբերդը վաղուց իրենց արժանի տեղն ունեն հայկական ամրոցաշինութեան պատմութեան մէջ, ապա ուշ միջնադարի Սիւնիքի պաշտպանական կառուցուածքները համարեայ չեն ուսումնասիրուած եւ դեռ չեն ներկայացուած մասնագիտական դրականութիւնում։

Սիւնիքի ուշ միջնադարի պաշտպանական կառուցուածքները կարելի է բաժանել երկու խմբի՝ վանք-ամրոցների եւ բերդերի։ Առաջին խմբին են պատկանում Շատին վանքը, Տաթեւի Մեծ անապատը, Հալիձորի բերդը (Հալիձորի կուսանաց անապատը), Կնեվանքը, երկրորդից պահպանուել է միայն Մեղրու բերդը։ Առանձնապէս հետաքրքրութիւն է ներկայացնում վանք-ամրոցի յօրինուածքը՝ երկու տարբեր ճարտարապետական օրկանիզմների՝ կրոնական եւ պաշտպանական կառուցուածքների իւրօրինակ միաւորումը։

Դեռ Թ.-ԺԱ. դարերում միջնադարեան Հայաստանի վանքերը շրջապատւում էին պարիսպներով, որոնք, սակայն, որպէս պաշտպանական կառուցուածքներ բաւական համեստ էին, եւ վանքերը ոչ մի յաւակնութիւն չունէին ամրոցների դեր խաղալու։

Դրութիւնն արմատապէս փոխուեց Հայաստանի անկախութեան ու պետականութեան կորստից յետոյ, երբ վանքերը սկսեցին իրենք մտածել սեփական անվտանգութեան ապահովման մասին։ Թէ նոր կառուցուող եւ թէ արդէն գոյութիւն ունեցող մենաստան-

ները շրջապատուեցին այնպիսի պաշտպանական կառուցուածքնե-
րով, որոնք բնորոշ են ամրոցներին։

ԺԲ.–ԺԳ. դդ. բուրգերով պարիսպներ կառուցուեցին մի
շարք համալիրներում, որոնցից կարելի է նշել Հաղբատի եւ Առա-
քելոց վանքերը։

Սակայն վանք–ամրոցների կառուցումը լայն տարածում ստա-
ցաւ առանձնապէս ԺԲ.–ԺԴ դարում։ Հայաստանի վանքերի մեծ մա-
սըն այդ դարում շրջապատուեց պաշտպանական կառուցուածքներով
(Գնդեվանք, Տաթեւի վանք, Նորավանք, Գեղարդ, Հառիճա վանք
եւ այլն)։ Բայց վանք–ամրոցն իր ճարտարապետական աւարտուն
կերպարն ստացաւ ԺԷ. դարում կառուցուած նոր վանքային հա-
մալիրներում (Խոր–վիրապ, Տաթեւի Մեծ անապատ, Շատին վանք,
Հալիձորի կուսանաց անապատ), որտեղ անսամբլը հենց սկզբից
կառուցւում էր կրօնական եւ պաշտպանական տարրերի զուգակցման
մտայղացումով։

ԺԷ.–ԺԸ. դդ. Սիւնիքի վանք–ամրոցները, ինչպէս եւ աւելի
վաղ կառուցուած որոշ վանքեր (Տաթեւ, Գնդեվանք, Որոտնավանք),
տեղադրուած են դժուարամատչելի, բարձրադիր վայրերում՝ լեռ-
ների զառիթափ լանջերին, հեռու բնակավայրերից եւ բանուկ ճա-
նապարհներից։ Այսպէս, բարձր լերան լանջին, դաղաթից քիչ ցա-
ծըր, խիտ անտառի մէջ թաքնուած, կառուցուած է Բեխի անապա-
տը։ Նման տեղադրութիւն ունի եւ Հալիձորի Հարանց անապատը։
Շատին վանքը կառուցուած է Եղեգիսի ձորից շատ բարձր, դժուա-
րամատչելի մի ամայի վայրում։ Անմատչելի տեղում է կառուցուած
Հալիձորի բերդը (Հալիձորի կուսանաց անապատը)։ Վանք–ամրոց-
ների տեղաբաշխումը Սիւնիքում, ընդհանրապէս վերցրած, ի հար-
կէ, չի ելնում ռազմագիտական նկատառումներից՝ ստեղծելու Հա-
յաստանի այս մասում պաշտպանական կառուցուածքների ցանց։
Մենաստանները կառուցւում էին կամ աւելի վաղ՝ Ժ.–ԺԴ. դարե-
րում գոյութիւն ունեցող կրօնական կեդրոնների տեղում (Շատին
վանք, Կնեվանք, Բեխի անապատ), կամ էլ խոշոր վանքերի մօտ
(Տաթեւի Մեծ անապատ)։ Վանք–ամրոցների պաշտպանական միջո-
ցառումներում հիմնականը՝ իրեն, մենաստանի անվտանգութեան
ապահովումն էր։ Միայն Հալիձորի կուսանաց անապատը, շնորհիւ
իր բացառիկ յարմար դիրքի, դարձաւ ԺԸ. դարում անկախ Ղափա-
նի կեդրոնն ու հիմնական ամրոցը եւ մեծ դեր խաղաց Դաւիթ–Բէ-
կի ազատագրական կռիւների ժամանակ։

❀

Այժմ, երբեմնի հզօր բերդից շատ քիչ բան է պահպանուել. բազմաթիւ կառուցուածքներից աւերակներ են մնացել միայն՝ կիսով չափ կամ արդէն լրիւ հողածածկ։

Հալիձորի բերդը կանգնած է Ոխչի գետի աջ ափին, զառիթափ լեռնալանջի փոքրիկ դողաւորութեան վրայ, Ղափանից ոչ հեռու։

Այս բարձունքից բերդն իշխում է Ոխչիի ձորի վրայ եւ հսկողութեան տակ պահում նրանով անցնող այն կարեւոր ճանապարհը, որը կապում է Ղափանը Բաղաբերդի եւ Տաշտունի լեռնանցքով՝ Մեղրու հետ։ Բերդից լաւ դիտւում են ձորից դէպի Հալիձոր տանող կածանները, որոնք հարկ եղած դէպքում կարող են վերեւից գնդակոծուել։ Իսկ հիւսիսային եւ արեւմտեան կողմերից Հալիձորը պաշտպանւում է բնական արգելքով՝ խիստ զառիթափ եւ անտառապատ լեռնալանջով։

Հալիձորի բերդը (Հալիձորի կուսանաց անապատը) իր կրօնական համալիրի եւ ամրոցի յօրինուածքների հետաքրքիր զուգակցմամբ առանձնայատուկ տեղ է գրաւում Սիւնիքի ԺԷ.–ԺԸ. դարերի ճարտարապետական անսամբլների շարքում։ Հալիձորը կառուցուել է ԺԷ. դարի առաջին կէսում եւ նշանաւոր է դարձել ԺԸ. դարում, որպէս Դաւիթ-Բէկի ազատագրական պայքարի գլխաւոր ամրոցն ու Ղափանի անկախ իշխանութեան կեդրոնը։ Այս է պատճառը, որ գրականութեան մէջ յաճախ են շփոթում, թէ երբ է կառուցուել Հալիձորը եւ ինչ նպատակով։

Ընդունուած է այն կարծիքը, որ Հալիձորը կառուցել է Դաւիթ-Բէկը 1720-ական թուականներին, որպէս բերդ։ Մինչդեռ Հալիձորի կուսանաց անապատը յիշատակւում է դեռեւս 1653 թուականին(1), իսկ 1668 թուականին մենաստան է այցելել Զաքարիա Ագուլեցին(2)։

1723 թուականին Դաւիթ-Բէկը Հալիձորը դարձնում է ազատագրուած Ղափանի կեդրոնը, վերակառուցելով այն անառիկ ամրոցի(3)։ Սակայն, այդ տարիներին Հալիձորը մնում է նաեւ որպէս մենաստան(4)։

---

1) Ալիշան, *Սիսական*, Վենետիկ, 1882, էջ 257։

2) Զաքարիա Ագուլեցու *Օրագրութիւնը*, Երեւան, 1938, էջ 75։

3) *Դաւիթ-Բէգ։ Ընտիր պատմութիւն Դաւիթ Բէգին, եւ պատերազմաց հայոցն Ղափանու որք եղեն ընդ դէմ Թուրքաց ի մերում ժամանակի, այն է յամի տեառն* 1722, *եւ հայոց* 1171։ Վաղարշապատ, 1871, էջ 20։

4) Նոյնը։

Դաւիթ-Բէկի մահից յետոյ թուրքական զօրքը դրաւում է Հալիձորը, քանդում պաշտպանական ամրութիւնները։

Համակառոյցի յատակագիծը անկանոն քառանկիւնի է, որը բխում է տեղանքից։ Ունի երկու մուտք՝ հարաւային եւ հիւսիսային պարիսպներում։ Անսամբլում գերիշխողը թէ տեղադրութեամբ եւ թէ չափերով, եկեղեցին է, որը անմշակ բազալտի խոշոր քարերից շարուած իր բարձր պատերով եւ լուսամուտների նեղ բացուածքներով աւելի ամրոցի է նման, քան պաշտամունքային կառուցուածքի։ Այդ տպաւորութիւնն ուժեղանում է հիւսիսից եւ հարաւից եկեղեցուն կից երկյարկ շինութիւններով, որոնք եկեղեցու հետ մի միասնական յօրինուածք են կազմում։

Հալիձորի եկեղեցին ուղղանկիւն կառուցուածք է։ Երկու մուտք ունի՝ հիւսիսային եւ հարաւային պատերում։ Լուսամուտները չորսն են, ընդ որում, հարաւային պատի արեւմտեան լուսամուտը հետագայում վեր է ածուել դրան՝ եկեղեցուն կից երկյարկ շինութիւնների երկրորդ յարկից աղօթասրահի արեւմտեան մասում շինուած փայտէ պատշգամը մտնելու համար։

Աղօթասրահի թաղի մէջ երկու մեթր տրամագծով կլոր անցք է թողնուած։ Սրա վրայ բարձրացել է եկեղեցու զանգակատունը։ Այժմ տեղում պահպանուել են զանգակատան սիւնաշարի խարիսխները։ Մեծ բացուածք ունեցող այս «երդիքը» լրացուցիչ լուսաւորութիւն է ստեղծել աղօթասրահի համար, որն անհրաժեշտ էր մանաւանդ կից շինութիւնների կառուցումից յետոյ, երբ եկեղեցու լուսամուտները ծածկուել են։

Հալիձորի բերդի եկեղեցին տարբերւում է այդ ժամանակաշրջանի միւս անսամբլների եկեղեցիներից պատերի հաստատութեամբ՝ 1,60 մ.։ Սա բացատրւում է ծածկի թաղի մեծ թռիչքով (6 մեթրից աւելի) եւ թաղակիր կամարների ու որմնամոյթերի բացակայութեամբ։ Ներսում աղօթասրահը բաւական ընդարձակ դահլիճի տպաւորութիւն է թողնում, որովհետեւ երկարութեան համեմատութեամբ լայնութիւնը մեծ է՝ 1:1,5 յարաբերութեամբ։ Այդ տպաւորութեանը նպաստում է դահլիճի զգալի բարձրութիւնը՝ յատակից մինչեւ թաղի տակ 7,20 մ. է։

Հալիձորի եկեղեցին չունի գաւիթ կամ սրահ, որ տարածուած էր միջնադարի այդ տիպի կառուցուածքներում։ Այստեղ եկեղեցու հիւսիսային եւ հարաւային կողմերին կից երկյարկ շինութիւնների առաջին յարկերը փաստօրէն գաւիթների դեր են կատարում, եւ եկեղեցու երկու մուտքերը բացւում են նրանց մէջ։

Եկեղեցուց հիւսիս կանգուն է ուղղանկիւն յատակագծով,

չորս մոյթերով դմբէթածածկ մի շինութիւն, որը, հաւանաբար, կառուցուել է որպէս դամբարան։ Նման յօրինուածքով դամբարաններ կան Աշտարակում եւ Սպիտակում, որոնք, սակայն աւելի ուշ են կառուցուած։

Հետաքրքրական է Հալիձորի բերդի պաշտպանական համակարգը։ Պարիսպները հաստ չեն՝ դրանց լայնութիւնը մօտ մէկ մետրը է։ Նման չափը ԺԸ. դարի պաշտպանական կառուցուածքում բացառուում է նրանով, որ հրազէնի առկայութեան դէպքում հաստ պարիսպներն արդէն աւելորդ էին՝ բաբաններով գրոհելու ժամանակաշրջանն անցել էր, իսկ հրանօթը դեռեւս լայն կիրառում չունէր լեռնային վայրերում մղուող կռիւներում։ Արեւելեան պարիսպը, որ կառուցուած է տեղանքի ամենացածր մասում, միաժամանակ եւ յենապատ է, որովհետեւ բերդի բակի արեւելեան մասը լիցքի շնորհիւ շրջապատից բարձր է ստացուել։ Այս պարիսպը դրսից ունի 3–3,5 մ. բարձրութիւն, իսկ ներսից՝ կէս մետր (աւելի ճիշդ՝ այքանն է պահպանուել)։ Համեմատաբար լաւ են պահպանուել հարաւային եւ հիւսիսային պարսպապատերը, իսկ արեւմտեանից մնացել են միայն հիմքերը։ Ամրոցն ունի շրջանաձեւ յատակագծով (արտաքին տրամագիծը 5 մ.) մէկ բուրգ՝ հարաւ–արեւմտեան անկիւնում։ Բուրգը տեղադրուած է համալիրի համեմատաբար թոյլ մասում, որովհետեւ եթէ բերդը հիւսիսից եւ հարաւից իշխում է շրջապատի վրայ, ապա հարաւ–արեւմուտքից, ընդհակառակը, այն տեղանքի նկատմամբ ցածր է եւ խոցելի է այդ կողմից։

Դրսից հարաւային պարսպին կից կայ ուղղանկիւն յատակագծով ոչ մեծ մի սենեակ։ Սա չէր կարող աշտարակ լինել, որովհետեւ պարսպապատից էլ ցածր է (երկրորդ յարկի հետքեր չկան) եւ չի հաղորդակցում բերդի հետ։ Պէտք է կարծել, որ սենեակը կառուցուած է ոչ թէ ԺԸ. դարի նորոգումների ընթացքում, այլ աւելի վաղ եւ մենաստանի պահակատունն է եղել։

Հալիձորի բերդը բացի պարիսպներից եւ բուրգից պահպանուած ուրիշ պաշտպանական կառուցուածքներ չունի։ Եկեղեցուն կից երկյարկանի շինութիւնները, որոնք նայում են դէպի արեւելք՝ դէպի ձորը, հաւանաբար օգտագործուել են ռազմական նպատակներով։ Ցաւօք, հարաւային խմբի արեւելեան մասը ամբողջովին քանդուած է, եւ դժուար է վերականգնել սկզբնական տեսքը, մանաւանդ այն մասինը, որը նայում էր դէպի ձորը՝ թշնամու հնարաւոր մօտեցման հիմնական կողմը։ Յօրինուածքի հիւսիսային կողմին կից շինութիւնների երկրորդ յարկը երկար թաղածածկ սենեակ է, որը ամբողջ լայնութեամբ կամարակապ բացուածքով դուրս է դա-

լիս առաջին յարկի հարթ կտուրը։ Այս հարթակը, որ գտնուում է արեւելեան պարսպից ինը մեթր հեռու եւ վերջինից երեք մեթր բարձր է, փաստօրէն վեր է ածւում բերդի արեւելեան մասի պաշտպանական սիստեմի երկրորդ աստիճանին (պարիսպից յետոյ)։

Այսպիսի հարթակ եղել է հաւանօրէն եւ հարաւային կողմում, երկրորդ յարկի զոյգ սենեակների դիմաց։ Հարթակից, վտանգի ժամանակ, կարելի է կրակի տակ վերցնել պարիսպների մատոյցները, կրկնապատկելով, ըստ բարձրութեան, պաշտպանական համակարգը։

Նման յաջող բազմաստիճան համակարգը եւ անառիկ դիրքը Դաւիթ-Բէկին հնարաւորութիւն են ընձեռել իր 350 զինակիցներով դիմաւորելու Թուրքական 70·000-անոց բանակին(5)։ Եթէ ընդունենք անդամ, որ պատմիչը թշնամու քանակը փոքր-ինչ գուցէ եւ չափազանցրել է, այնուամենայնիւ, ուժերի յարաբերութեան անհաւասարութիւնն ակներեւ է։ Սակայն մարտի ընթացքում, ամրոցի պաշտպանական լաւ յատկութիւնների շնորհիւ, զոհերի թուի յարաբերութիւնը հակառակն է եղել. «...եւ զաւուրս վեց մարտ եղեալ ընդ միմեանս կրռուէին, եւ ի կողմանցն հակառակաց յաւուրն հարիւր, կամ երկու հարիւր, եւ երբեմն նաեւ երեք, կամ չորս հարիւր անկանէին, եւ ի սոցանէ հաղիւ մի ոք, կամ երկու վասն ամրութեան տեղւոյն»(6)։

Հալիձորի բերդի պաշտպանութեան տեսարանները ուշագրաւ են պատմառազմագիտական առումով՝ որպէս ԺԸ. դարում հայերի մղած ազատագրական պայքարի հաւաստի նկարագրութիւն։ Յայտնի է դառնում, որ չնայած հրաղէնի առկայութեանը, ամրոցները պաշարելիս պարիսպներից ներս թափանցելու համար օգտագործել են դեռեւս վաղ միջնադարից կիրառուող սանդուղքները։ Իսկ պաշտպանուողները սրա դէմ պայքարել են ճիշդ այնպէս, ինչպէս հարիւրամեակներ առաջ՝ «...զահագին մեծամեծ մեքենայս (ըստ կերպէ մեծամեծ սանդղաց, թուով քսան եւ վեց) ընդ ինքեանց բարձեալ բերէին, դային մերձենային, եւ պարիսպ անդր յեցուցանէին, եւ բազմութիւն... յերիս խումբս բաժանէին, եւ յերից կողմանց դրոհ տուեալ ի մեքենայից անտի ի վերայ պարսպացն դիմէին։ Իսկ պահապանք պարսպացն ի վերուստ անտի հարեալ զնոսա, ի մեքենայիցն ի վայր թօթափէին...»(7)։

---

5) Դաւիթ-Բէգ, էջ 45։

6) Նոյնը, էջ 47։

7) Նոյնը, էջ 47-48։

Հալիձորի բերդի ընդհանուր տեսքը (ըստ Ալիշանի)



Բերդի գլխաւոր յատակագիծը
(Չափագրութիւն՝ հեղինակի)



Հալիձորի բերդի հիւսիսային դարպասը



Հալիձորի բերդի բուրգը

Հալիձորի բերդը, ինչպէս եւ շատ ուրիշ բերդեր Հայաստանում, ստորգետնեայ դաղտնի անցք է ունեցել դէպի դուրս։ Այդպիսի անցքերը օդտագործուել են կամ կարիքի դէպքում դրսից ջուր հայթայթելու, եւ կամ պաշարող թշնամու վրայ անսպասելի յարձակուելու համար։ Հալիձորում դաղտնի անցքը օդտագործուել է երկրորդ նպատակով եւ թշնամու համար անակնկալը այնքան մեծ է եղել, որ մի քանի հարիւր զինուորներ կարողացել են խուճապի մատնել թշնամու զօրքը(8)։

Իրաւամբ կարելի է ասել, որ Հալիձորի պաշտպանական համակարգի առանձնայատկութիւնները, ինչպէս եւ պատմիչի կողմից բերդի պաշարման մանրամասն նկարագրութիւնը, մեծ արժէք են ներկայացնում ուշ միջնադարի հայկական ամրոցաշինութեան ու ռազմական արուեստի սկզբունքների բացայայտման համար։

THE HALITZOR CASTLE

MOURAD HASRATIAN

In the 11th century, in the wake of the loss of the independence of Armenia, Armenian convents realize that they must ensure their own safety. Very soon, old and newly-built convents are surrounded with surveillant citadels. The convent-citadel architectural complex, however, takes its definitive form in the 17th century.

One of the most important provinces of Armenia, Sunik, has its prominent citadels. Most famous of these convent-citadels is that of Halitzor, built during the first half of the 17th century.

The castle plays a notable role in the 18th century battles for independence conducted by David Beg, who transforms it to an inaccessible citadel, as headquarters of liberated Ghapan. At present, very little is left of that castle, but even the fractional part is sufficient testimony of its special arhitectural value.

---

8) Նոյնը, էջ 50։